

Ինպե՞ս կարելի է ձեռք բերել պարտատոմս

Պարտատոմսի առաջնային տեղաբաշխման ժամանակ թողարկման պայմաններով սահմանված կարգով այն կարելի է ձեռք բերել թողարկողից կամ անդերռայթերից:

Երկրորդային շուկայից պարտատոմս կարելի է ձեռք բերել.

- ուղղակի առուվաճառքի պայմանագիր կնքելու միջոցով,
- որևիցե բրոքեր/դիլերային ընկերության միջոցով, որն իր հերթին կարող է պարտատոմս ձեռք բերել բորսայից կամ երկրորդային շուկայից:

Ո՞վ է բրոքերը (դիլերը)

Բրոքերային/դիլերային ընկերությունը համապատասխան արտոնագիր ստացած մասնագիտացած կազմակերպություն է, որն արժեթղթերի շուկայում իր կամ հաճախորդի անունից ու հաշվին պարբերաբար իրականացնում է արժեթղթերով գործարքներ:

Ո՞վ է անդերռայթերը

Անդերռայթերը ներդրումային հաստատություն է (կամ խումբ), որը համաձայնեցված պայմաններով և վարձավճարով սպասարկում է թողարկողին և իրականացնում է արժեթղթերի շուկայում առաջնային տեղաբաշխումը:

Կարելի՞ է արդյոք օտարել պարտատոմսը մինչև մարումը

Ազատ շրջանառության իրավունքով թողարկված պարտատոմսերը կարելի է վաճառել, նվիրել ու ժառանգել՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ո՞վ է իրականացնում պարտատոմսի սեփականության իրավունքի գրանցումը

«Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքի համաձայն հաշվետու թողարկողների կողմից թողարկված պարտատոմսերի սեփականության իրավունքի գրանցումն իրականացնում է Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիան:



USAID
FROM THE AMERICAN PEOPLE

Հայաստանում բանկերի կողմից թողարկված պարտատոմս ձեռք բերելու դեպքում, ֆիզիկական անձանց համապատասխան ներդրումների վերադարձելիությունը «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն երաշխավորվում է նաև Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից՝ 2 մլն դրամի սահմաններում:

Պարտատոմսերի թողարկման վերաբերյալ անվճար խորհրդատվություն ստանալու համար դիմեք՝

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ
ԶԱՐԳԱՅՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

Ծրագիրն իրականացնում է
Էներջինգ մարկեթս գրուպ
ընկերությունը

ՀՀ, Երևան 0012,
Հովսեփ Էմին 75

Հեռ՝ (374 10) 268982
Ֆաքս՝ (374 10) 210882
Էլ. փոստ՝ info@fsdp.am

www.fsdp.am

**Ֆինանսական
Ոլորտի
Զարգացման
Ծրագիր**

**Պ Ա Ր Տ Ա Տ Ո Մ Ս Ե Ր
Հաճախակի տրվող**

ՀԱՐՑ

10

ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆ

Ի՞նչ է պարտատոմսը

Պարտատոմսը պարտքային հարաբերություններ հավաստող արժեթուղթ է, որն անպայման ներառում է թողարկողի հետևյալ երկու պարտավորությունները.

- Սահմանված ժամկետը լրանալուց հետո պարտատոմսուն նշված գումարը վերադարձնել պարտատոմսը տիրապետողին,
- Պարտատոմսի անվանական արժեքի նկատմամբ պարտատոմսուն ամրագրված եկամուտը վճարել պարտատոմսը տիրապետողին՝ որոշակի գումարի կամ այլ գույքային համարժեքի տեսքով:

Ի՞նչ նպատակով է թողարկվում պարտատոմսը

Պարտատոմսերը կարող են թողարկվել լրացուցիչ ֆինանսական միջոցներ ներգրավելու, թողարկողի ունեցած պարտքերի վերաֆինանսավորման կամ կոնկրետ ներդրումային ծրագրերի և միջոցառումների ֆինանսավորման նպատակով:

Ի՞նչ տարբերություն բաժնետոմսի և պարտատոմսի միջև

Ներդրողը՝ գնելով բաժնետոմս, դառնում է թողարկող ընկերության սեփականատերերից մեկը: Ներդրողը ձեռք բերելով թողարկող ընկերության պարտատոմս, դառնում է նրա փոխատուն:

Ի՞նչ հարկեր են վճարվում պարտատոմսից ստացված եկամուտից:

Եթե ներդրողը ֆիզիկական անձ է, ապա համաձայն «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի կորպորատիվ պարտատոմսերից ստացված հարկվող եկամտի դիմաց վճարում է 10%, սակայն չի հարկվում կապիտալի հավելածը: Եթե ներդրողը իրավաբանական անձ է, ապա վճարումներն իրականացվում են «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով՝ շահույթի 20% -ի չափով:

Պարտատոմսի ի՞նչ հիմնական տեսակներ կան

3. Ըստ անվանական արժեքի մարման.

- Պարտատոմսեր, որոնց անվանական արժեքը մարվում է **միանվագ**,
- Պարտատոմսեր, որոնց անվանական արժեքը մարվում է **մասնաբաժիններով**՝ որոշակի ժամանակահատվածի բաշխմամբ:

4. Ըստ թողարկողի կողմից կատարվող վճարումների

- **Զրոյական արժեկտրոնով կամ զեղչատրոնով պարտատոմսեր**, որոնցով վերադարձվում է միայն կապիտալը՝ անվանական արժեքի չափով, սակայն տոկոսներ չեն վճարվում,
- **Արժեկտրոնային պարտատոմսեր**, որոնք այն տիրապետողին տալիս են պարբերաբար վճարվող ամրագրված եկամտի և մարման ժամանակ պարտատոմսի անվանական արժեքի ստացման իրավունք,
- **Պարտատոմսեր, որոնց դիմաց մինչև մարման պահը տոկոսներ չեն վճարվում**, իսկ մարման պահին ներդրողին վճարվում է պարտատոմսի անվանական արժեքը և համախմբված տոկոսային եկամուտը:

5. Ըստ արժեկտրոնային եկամտի վճարման ձևի պարտատոմսերը լինում են՝

- **Հաստատագրված տոկոսադրույքով**, որոնց դիմաց պարտատոմսի շրջանառության ողջ ընթացքում վճարվում է պարտատոմսի թողարկման պայմաններով սահմանված հաստատագրված տոկոս,
- **Լողացող տոկոսադրույքով**, որոնց արժեկտրոնի դրույքաչափը թողարկման պայմաններով կցվում է որոշակի պարբերական ֆինանսական ցուցանիշի (օրինակ՝ պետական պարտատոմսեր, միջբանկային վարկային տոկոսադրույք և այլն),
- **Ինդեքսավորվող**, որոնց տոկոսադրույքը փոխառության տարիների ընթացքում հավասարաչափ աճում է:

Պարտատոմսի ի՞նչ հիմնական տեսակներ կան (շարունակ.)

1. Ըստ ապահովվածության պարտատոմսերը լինում են.

- **Գրավով ապահովված**, որոնք իրենց հերթին կարող են լինել.
 - **Ֆիզիկական ակտիվներով ապահովված**, որոնք ապահովված են թողարկողի որոշակի գույքային ունեցվածքով,
 - **Արժեթղթերի գրավով ապահովված**, որոնք ապահովված են թողարկողի սեփականությունը հանդիսադող արժեթղթերով,
 - **Հիփոթեքային**, որոնք թողարկվում են այն վարկատու ընկերությունների կողմից, որոնց մոտ որպես վարկի ապահովվածություն գրավ է դրված անշարժ գույք: Այդ վարկի դիմաց ստացվող տոկոսագումարները հանդիսանում են պարտատոմսի մարման և նրանցով պայմանավորված եկամուտների վճարման աղբյուր:
- **Առանց գրավի ապահովման**, որոնք լինում են.
 - **Առանց որևէ նյութական ակտիվների ապահովման**, որոնց համար երաշխիք է հանդիսանում թողարկող ընկերության «բարեխղճությունը», ինչպես նաև թողարկող ընկերությունն օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում իր ամբողջ ունեցվածքով:
 - **Թողարկողի կոնկրետ եկամտի կամ կոնկրետ ներդրումային ծրագրի ապահովմամբ**, երբ թողարկող ընկերությունը պարտավորվում է վճարել տոկոսներ և մարել փոխառության գումարն ընկերության կոնկրետ ներդրումային ծրագրերից ստացված, որոնց իրականացման համար ուղղվել էր փոխառության միջոցները, կամ այլ կոնկրետ եկամուտների հաշվին,
 - **Երաշխավորված**, երբ փոխառությամբ պայմանավորված պարտավորությունների կատարումը երաշխավորվում է մեկ այլ անձի կողմից,
 - **Բաշխված կամ փոխանցված պարտավորությամբ**, երբ փոխառությամբ պայմանավորված պարտավորությունների կատարումը բաշխվում է մի քանի ընկերությունների միջև,
 - **Ապահովագրված**, երբ փոխառությամբ պայմանավորված պարտավորությունների կատարումն ապահովագրվում է ապահովագրական ընկերության կողմից: